նարար են եղել։ Այս բոլորից յետոյ պէտք է որ հասկանալի դառնայ Օհան Աղբակեցին Վասպուրականի Աղբակ գաւառի և նորա հրաչակաւոր Բարթուղիմէոս վանքի հետ կապ չունի, այլ Հաղբատի Օհաններից մէկն ու մէկն է և կամ շատերն ի մի ձուլուած։

§ 7. Պարոն Աստղիկն այստեղ Սասնոյ թագաւոր է (№14, Ա, § 2, 8—9), որ հաստատում են № 2 և 7, ըստ որոնց պարոն Աստղիկը Վերգոյի տան է. մինչդեռ ըստ մի այլ փոփոխակի նա ծագմամբ անյայտ է և Երզնկացի, կոչւում է «չար Աստղիկ» և սպանւում է Պատիկ Մէհրից, որ Աստղիկի նշանած Դեղձոնը, Փիրմուս հալիւորի աղջիկը, խլեց և կին տուաւ Խանդութի եղբայր Քեռի Թորոսիկի որդուն, Խոր-Մանուկին (№ 3, Դ, էջ 55—56)։ Աստղիկ Պարոնի Ջոջանց ցեղի հետ թշնամի լինելը երևում է և մի այլ փոփոխակից, ուր Մարայ մելիքը Սասունի վրայ արշաւելիս դիմում է «հօթ թագաւորի» օգնութեան, որոնցից յիշւում են միայն Բարա Ֆրէնկին կամ Ֆրէնկի Պապը, Աստղիկ Պարոնը, Աճմու շահը և սուլթան Մուրադ (№ 10, Բ, էջ 424—425 և 430)։

Մեզ թւում է, որ աւելի ճիշտ է Աստղիկի Սասունցի լինելը, որի բաղինը կար Սասունի կողքին Աշտիշատում, կից Խաջութեան տատուած Վանագնի մեհեանին, որի կինն էր. ինչպէս որ այս փոփոխակում Աստղիկի աղջիկը՝ Սառանը, «Բաջանց թագաւորի լաճու» կինն է դառնում։ Եւ եթէ Աստղիկի դուստրը ջրով է յղանում և դաւակներ ծնում, ըստ հնագոյն ժողովրդական երգի Վանագն ինքն էլ ծիրանի ծովից է ծնւում։ Աստղիկի թոռ Սանասարն էլ կին է առնում Բաջանց թագաւորի աղջիկ Սուսաթ խաթունը և Տղայ Դաւիթը՝ Կապտա Կոզայ թագաւորի աղջիկ Խանդիթը (№ 14)։ Եւ որովհետև Ջոջ Մէհրի մօրական պապը, Կապտակոզի թագաւորը, Պապն է (№ 13), որ յիշւում է իբրև Բաջանց թագաւոր Բաջանց տան վէպում. ուստի պարզ է, որ № 13 և 14 պահել են Ջոջանց տան—Մամիկոնեանց և Բաջանց տան—Արշակունեաց փոխադարձ խնամական կապերը[1], ինչպէս այդ պահել է և Բաջանց վէպը. որ երբեմն Մամիկոնեանց ևս ուզում է «Բաջանց» կոչումը տալ, և որ կարծես վաւերանում է Մ. Խորենացու պարսից Պահլաւ տոհմերի ծագման զրոյցով (Խորեն. Բ, ԻԸ, ԿԸ համա. ԼԳ, էջ 110)։ Մենք հիմքեր ունինք ենթադրելու, որ այդ գլուխները վերաբերում են ոչ թէ, ինչպէս Խորենացին ասում է, Պարսից Պահլաւ արշակունիներին այլ հայ. ուրեմն սպարապետի Պահլաւը այդտեղ մեր հայոց սպարապետական տունը—Մամիկոնեանը պիտի լինէր։ Սակայն այս մասին այլ ուրեք։

---

1. Արարատ Ամս. 1906. Դեկտեմբ. էջ 870. Համա. Ջոջանց պատմականը. էջ 26. Արարատ Ամս. 1907. Հոկտ.-Նոյմբ. էջ 1007։